



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՀՈԳԵՅԱՆՔԻՍ ՀՈԳԵԼՈՅՍ Տ. ՆՇԱՆ ԵՊՍԿ. ԹՓՈՒՉԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Ս. Աթոռոյս Դիւանատունէն տրուած հաղորդագրութենէ մը խոր ցաւով իմացանք, որ Երեքշաբթի, 27 Ապրիլին, վախճանած է Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան երիտասարդ անդամներէն՝ Ատրպատականի հայոց Թեմի Առաջնորդ Տ. Նշան Եպսկ. Թօփուզեան, սուգի մատնելով բոլորս: Սրբազան Հայրը շիջած է յետ կարճատեւ հիւանդութեան, Երեւանի մէջ, ուր կը գտնուէր վերջին շաբաթներուն՝ բժշկական դարմանումի համար:

Վեհափառ Հայրապետին տնօրինումով, Կիրակի, 2 Մայիսին, հոգեւոյս Սրբազանին հոգւոյն համար հոգեհանգստեան յատուկ արարողութիւն պիտի ունենայ Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին, ինչպէս նաեւ մեր բոլոր Թեմերու եկեղեցիներուն մէջ:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը այս տխուր առիթով ցաւակից են Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Միաբանութեան անդամներուն եւ Ատրպատականի Թեմի ժողովականութեան ու հայութեան:

Արդ, Առաջնորդ Սրբազանին յանձնարարութեամբ, Կիրակի, 2 Մայիսին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն պիտի կատարուի հոգելոյս Սրբազանին յիշատակին:

Առաջնորդ Սրբազան Յայրը պիտի հանդիսապետէ Էսսինոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Ս. Պատարագին եւ պիտի փոխանցէ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամը: Յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգիստ պիտի կատարուի նորոգ վախճանեալ Տ. Նշան Եպսկ. Թօփուզեանի յիշատակին:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը, որ ներկայ ըլլալ արարողութեան ու աղօթք բարձրացնէ առ Աստուած, որպէսզի Երկնաւոր Յայրը հոգելոյս Սրբազանին հոգին ընդունի իր արքայութեան մէջ ու պարգեւէ յաւիտենական հանգիստ:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

**IN MEMORIAM**  
**BISHOP NESHAN TOPOUZIAN**  
(1966-2010)

With deep sorrow we were informed by the Catholicosate of Cilica of the untimely passing of H.G. Bishop Neshan Topouzian, Prelate of the Diocese of Azerbaijan (Iran), which occurred in Armenia on Tuesday, April 27<sup>th</sup>, following a brief illness.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Councils join H.H. Catholicos Aram I, the Cilician Brotherhood, and the Diocese of Azerbaijan in mourning this great loss.

Requiem for the soul of the late Bishop will be offered at the Mother Cathedral of the Catholicosate in Antelias, Lebanon on Sunday, May 2<sup>nd</sup>, 2010. By the order of His Holiness, requiem will also be offered in all the Dioceses of the Catholicosate of Cilicia.

The Prelate will preside over Divine Liturgy and requiem at Holy Martyrs Church in Encino, and will deliver the sermon. We invite our faithful to join us as we pray for Almighty God to grant eternal peace and rest to the soul of Bishop Neshan Topouzian.

May his memory remain ever blessed.

\*\*\*

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՀՕՄ-Ի ԶՐԴ ՓԱՌԱՏՈՆԻ**  
**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ**

Շաբաթ, 1 Մայիսի յետմիջօրէին, Առաջնորդ Սրբազան Յայրը ներկայ պիտի ըլլալ ՀՕՄ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան կազմակերպած տարեկան 9-րդ փառատօնին եւ աղօթքով ու օրհնութեան խօսքով պիտի կատարէ բացումը: Ծանօթ է, որ ՀՕՄը այս

տարի կը տօնէ իր 100ամեակը. այս փառատօնը կ'իյնայ պատմական տօնախմբութեան ձեռնարկներուն ծիրին մէջ:

Երկօրեայ փառատօնը տեղի կ'ունենայ Կլենտէյլի Civic Auditorium-ի մէջ:

Յայտնենք, որ ՅՕՄ-ի 100-ամեակին նուիրուած տօնակատարութիւնն ու ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Կիրակի, 16 Մայիսի երեկոյեան Woodland Hills-ի Marriott պանդոկին մէջ: Առաջնորդ Սրբազան Զայրը պիտի ընդառաջէ հրաւերին:

## **PRELATE TO PRESIDE OVER OPENING CEREMONY OF THE 9<sup>TH</sup> ANNUAL ARS FESTIVAL**

The 9<sup>th</sup> annual Armenian Relief Society Festival will be held this weekend at the Glendale Civic Auditorium. The Prelate will preside over the opening of the festival, during which he will deliver the invocation and his message.

On Sunday, May 16, the ARS will celebrate its centennial with a gala banquet at the Woodland Hills Marriott. The Prelate will attend the celebration.

\*\*\*

## **ԶԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԶԱՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ 25ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ**

Զալիֆորնիոյ Զայ Ամերիկեան Բժշկագիտական ընկերակցութիւնը այս տարի կը տօնէ իր հիմնադրութեան 25րդ տարեդարձը: Այս առիթով, ընկերակցութիւնը կազմակերպած էր ճաշկերոյթ-ընդունելութիւն մը, որ տեղի պիտի ունենայ Կլենտէյլի Զիլթըն պանդոկին մէջ, Շաբաթ, 1 Մայիսի երեկոյեան:

Յանուն Առաջնորդ Սրբազան Զօր, Սոնթեպելլոյի Ս. Խաչ Տաճարի հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Աշոտ Զինյ. Գամպուրեան ներկայ պիտի ըլլայ հանդիսութեան եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին ողջոյններն ու բարեմաղթութիւնները:

Եւ յենք, որ այս ընկերակցութիւնը ունի ազգանուէր ծառայութիւն. 25ամեակի ձեռնարկէն գոյացող հասոյթը պիտի տրամադրուի Զայաստանի մէջ շաքարախտէ տառապող անչափահասներու բուժման:

## **ARMENIAN AMERICAN MEDICAL SOCIETY 25<sup>TH</sup> ANNIVERSARY GALA BANQUET**

On Saturday, May 1<sup>st</sup>, the Armenian American Medical Society of California will be celebrating its 25<sup>th</sup> anniversary with a gala banquet at the Glendale Hilton.

Pastor of Holy Cross Cathedral Rev. Fr. Ashod Kambourian will attend and convey the Prelate's blessings.

Proceeds from the banquet will benefit the Juvenile Diabetes Project in Armenia.

\*\*\*

## **ՀԱՅ ԱՄԵՏ. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ՎԱՐԺԱՐԱՆԻ 30ԱՄԵԱԿԻ ՁԵՌՆԱՐԿ**

Կիրակի, 16 Մայիսի երեկոյեան, «Արարատ Տան» Միշըն Հիլզի «Տոքմէճեան» սրահին մէջ, տեղի պիտի ունենայ Ալթատենա շրջանի Հայ Աւետ. Սահակ-Մեսրոպ վարժարանի 30-ամեակի տօնակատարութիւն-ճաշկերոյթը:

Առաջնորդ Սրբազան Հայրը ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին եւ պիտի փոխանցէ իր օրհնութիւնները:

## **SAHAG MESROB ARMENIAN CHRISTIAN SCHOOL 30<sup>TH</sup> ANNIVERSARY BANQUET**

The 30<sup>th</sup> anniversary banquet of Sahag Mesrob Armenian Christian School will take place on Sunday, May 2<sup>nd</sup>, at Ararat Home "Deukmejian Hall" in Mission Hills.

The Prelate will attend and convey his blessings.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Երեքշաբթի, 27 Ապրիլի յետմիջօրէին ընդունեց այցելութիւնը Հայ Դատի Յանձնախումբի Արեւմտեան Միացեալ Նահանգներու յանձնախումբի ատենապետուհի Տիկին Այտա Տիմիճեանի եւ անդամներէն՝ կառավարական հաստատութեանց հետ համակարգող Տիկին Լեռնա Գայսերեան-Շիրինեանի:

Հանդիպումը առիթ եղաւ խորհրդակցելու ընդհանրապէս մեր ժողովուրդի իրաւունքներու հետապնդման աշխատանքներուն մասին, մասնաւորաբար կեդրոնանալով վերջին շաբաթներու զարգացումներուն, ապա նաեւ Ապրիլ 24ի առիթով իրագործուած ծրագիրներուն ու ձեռքբերումներուն վրայ: Խորհրդակցութեան նիւթ եղան նաեւ Հայ Դատի յանձնախումբին ու Ազգ. Առաջնորդարանին միջեւ գործակցութիւնը առաւել եւս սերտացնելու կարելիութիւնները:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց հայութեան իրաւունքներուն համար մեր երիտասարդութեան բազմաճիւղ պայքարն ու ի գործ դրած աշխատանքները, վստահութիւն յայտնելով, որ անոնք յառաջընթաց պիտի արձանագրեն քայլ առ քայլ:

## PRELATE MEETS WITH ANC-WR REPRESENTATIVES



On Tuesday, April 27<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Armenian National Committee Western Region Board Chair Mrs. Aida Dimejian and Government Relations director Mrs. Lerna Kayserian-Shirinian.

The Prelate and representatives discussed recent developments in our cause and collaborative efforts between the ANC and the Prelacy, and reflected on the large number of Genocide commemoration events that were held in recent days and weeks.

The Prelate commended the dedication of all those involved in the welfare and progress of our nation, and especially of our youth who are actively and devotedly working for advancements in our cause.

\*\*\*

## ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 95ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ՄԻԱՅԵԱԼ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՔՆԵՐ

Յեղասպանութեան 95րդ տարեդարձին առիթով, Արեւմտեան Միացեալ Նահանգներու մեր Թեմը եւս յիշատակի արարողութիւններով ու ոգեկոչական հաւաքներով խոնարհեցաւ մեր բիւրաւոր նահատակներուն յիշատակին առջեւ, միաժամանակ վերանորոգելով մեր անսակարկելի իրաւունքներուն պահանջատերի կեցուածքն ու զանոնք վերականգնելու յանձնառութիւնը:

Ուրբաթ, 23 Ապրիլի երեկոյեան, Նորթ Յոլիվուտի Հայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ միացեալ Ս. Պատարագ: Պատարագիչն էր Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան. Ս. Սեղանին սպասարկեցին Գերպ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան: Ներկայ էին Թեմիս հոգեւորականաց դասու անդամները: Աղօթակից եղան Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ

Հոգ2. Տ. Աստուծոյ Վրդ. Սարոյեան եւ Հայ Աւետ. համայնքի հոգեւոր հովիւ Վեր. Յովսէփ Մաթոսեան: Ներկայ էին Ազգ. Վարչութեան անդամներ, կուսակցական եւ միութենական ներկայացուցիչներ եւ ուխտապահ հաւատացեալներու բազմութիւն մը:



Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ հոգեհանգիստ. երեք համայնքներու հոգեւոր առաջնորդները արտասանեցին ոգեկոչական սրտի խօսքեր: Առաջնորդ Սրբազանը իր պատգամին մէջ վեր առաւ հայութեան դէմ գործուած պատմական ոճիրին ահազնութիւնը, հայրենիքին ու քրիստոնէական հաւատքին նահատակներուն

հաւատարմութիւնն ու պահանջատէր մնալու անոնց կտակը: Առաջնորդ Սրբազանը ընդգծեց, որ «մենք՝ նահատակներու կտակին ժառանգորդներս, Ապրիլը չենք նկատէր միայն կորուստներու յիշատակման ամիս, այլ Ապրիլն ու տարուան իւրաքանչիւր ամիսը, իւրաքանչիւր օրը վերածած ենք արդարութեան հետապնդման հանգրուանի: Նահատակներու յիշատակման կողքին, կը յիշենք նաեւ մեր այն հերոսները, որոնք կերտեցին մեր հերոսամարտերը, 1915ին, թէ քսան տարի առաջ՝ Արցախի մէջ: Հաւատքի, հայրենիքի եւ մշակութային ժառանգութեանց հաւատարմութեան ճամբուն ինկած մեր նահատակներուն կողքին, մեր հերոսամարտերը կերտողներ կը լուսաւորեն մեր պայքարի ուղին, Յեղասպանութեան դեկաւարները զգետնող արդարահատոյցները կը պատգամեն, որ մեր պայքարը բազմաճիւղ է ու յարատեւ, անոր թիրախն է իրաւունքներու վերականգնում, մարդկային ու նիւթական բոլոր կորուստներուն դիմաց արդար հատուցում»:



Ապրիլ 24ի առաւօտուն, Առաջնորդ Սրբազանը, հոգեւոր հայրերու ընկերակցութեամբ, մասնակից եղաւ Երիտասարդական հաւաք-քայլարշաւին, որ կազմակերպուած էր Հոլիվուտի մէջ, «Միացեալ Հայ Երիտասարդներ» կազմակերպութեան կողմէ: Առաջնորդ Սրբազանը կատարեց հաւաքին



բացման աղօթքը, իսկ աւարտին, պատգամ մը ուղղեց մասնակից երիտասարդութեան, վեր առնելով մեր Դատին հետապնդման մէջ անոնց կենսական դերը եւ յորդորելով անսահանջ շարունակել պահանջատիրական երթը:

Աւելի ուշ, կէսօրին, Սոնթեպելլոյի Նահատակաց Յուշարձանին շուրջ տեղի ունեցաւ քաղաքական հաւաք. Առաջնորդ Սրբազանը, Ազգ. Վարչութեան ու Ժողովականութեան անդամներ մասնակից եղան հաւաքին, որուն հետեւեցաւ հոգեհանգիստ՝ հայկական բոլոր յարանուանութեանց Առաջնորդներուն եւ հոգեւորականներու մասնակցութեամբ:

Յիշեցնենք, որ Առաջնորդ Սրբազանը, հոգեւոր հայրեր, Ազգ. Վարչութեան անդամներ եւ ներկայացուցիչներ մասնակից եղան նաեւ Սաքրամենթոյի, Լոս Անճելըսի, Փասատինայի, Կլենտէյլի քաղաքապետութեանց ոգեկոչական հաւաքներուն ու պաշտօնական արարողութեանց, ինչպէս նաեւ Յեղասպանութեան յիշատակման ձեռնարկներու:

## **95<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE GENOCIDE COMMEMORATED WITH DIVINE LITURGY AND COMMUNITY GATHERINGS**



In the days leading up to, and including, April 24, 2010, Armenians worldwide commemorated the 95<sup>th</sup> anniversary of the Genocide with various events including Divine Liturgy, requiem, community gatherings, and protests.

Within the Western Prelacy, joint Divine Liturgy was celebrated among the Apostolic, Catholic, and Evangelical Churches on the evening of Friday, April 23<sup>rd</sup>, 2010, at the North Hollywood Parish. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy. He was assisted at the altar by Very Rev. Fr. Muron Aznikian, Very Rev. Fr. Barthev Gulumian, and clergy members. Among those in attendance were Executive Council members and representatives of community organizations.

The Prelate also delivered a message on this occasion, as did Very Rev. Fr. Andon Saroyan, Rector of the Armenian Catholic Church, and Rev. Joe Matossian, Minister of the Armenian Evangelical Union of N. America.

In his message, the Prelate exalted the faith of our martyrs and their sacrifice for faith and nation, and the responsibility of all to pursue justice and our rights. "We do not remember our martyrs on this one day only; we remember them each day as we work towards recognition, truth and justice",

said the Prelate. "We remember also our heroes, who fought and defended our lands, whether 95 years ago or 20 years ago in Artsakh, and who demonstrate that our struggle will not end until justice is served".

Requiem for the souls of our martyrs followed.

On the morning of April 24<sup>th</sup>, the Prelate and clergy participated in a protest rally in Little Armenian organized by the Unified Young Armenians. The prelate conducted the opening prayer and later delivered his message to the youth, commending their active role in our cause and urging them to continue on their path and mission undeterred.

In the afternoon, the Prelate and clergy participated in the community gathering at Bicknell Park in Montebello, organized by the Armenian Genocide United Commemorative Committee, which was followed by requiem service presided over by the spiritual leaders of three Armenian denominations.

In the days and weeks preceding April 24, the Prelate, clergy, and Executive Council members also participated in commemorations at the Sacramento State Assembly, Los Angeles, Pasadena, and Glendale City Halls, and various community-wide events.

\*\*\*